ՎՐԱՍՏԱՆ

«ՖՐԱՆՏԱՆՈ» (ԱԺՁԱՐՈՒՅԺԼՈՒ) ԹԵՐԹԸ ԼՈՒՅՍ Է ՏԵՍՆՈՒՄ 1920 Թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻՑ № 54 - 55 (16352) ՇԱԲԱԹ, 1 ՕԳՈՍՏՈՍԻ 2015 Թ. ԳԻՆԸ՝ 25 ԹԵԹՐԻ

«ԹԲԻԼԻՍԻ-2015»

ԿԱՅԱՅԱՎ ԵՎՐՈՊԱԿԱՆ ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ՕԼԻՄՊԻԱԿԱՆ ՓԱՌԱՏՈՆԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԲԱՑՈՒՄԸ

Հուլիսի 26-ին Թբիլիսիի Միխեիլ Մեսխու անվան մարզադաշտում տեղի ունեցավ Եվրոպական երիտասարդական օլիմպիական «Թբիլիսի-2015» փառատոնի պաշտոնական բացման արարողությունը: Փառատոնի բացմանը ելույթ ունեցան Վրաստանի վարչապետ Իրակլի Ղարիբաշվիլին, փառատոնի կազմկոմիտեի նախագահ Ալեքսի Ախվլեդիանին:

«Մենք երազանքը իրականություն դարձրինք, իրականացվել են ենթակառույցային մասշտաբային նախագծեր: Տասնմեկ մարզահրապարակներից յոթը կառուցվել է այս փառատոնի համար»,- հայտարարեց Ալեքսի Ախվլեդիանին:

Ողջույնի խոսքով փառատոնի մասնակիցներին դիմեց նաեւ Եվրոպայի օլիմպիական կոմիտեի նախագահ Պատրիկ Հիկ-

(Շարունակությունը՝ 2-րդ էջում)

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՎԱՐՉԱՊԵՏԸ ՄԱՍՆԱԿՑԵՑ ԵՎՐՈՊԱԿԱՆ ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ՕԼԻՄՊԻԱԿԱՆ ՓԱՌԱՏՈՆԻ ԲԱՑՄԱՆ ԱՐԱՐՈՂՈՒԹՅԱՆԸ

Հայաստանի վարչապետ Հովիկ Աբրահամյանը, Վրաստան կատարած աշխատանքային այցի շրջանակում, հուլիսի 26-ին մասնակցեց Եվրոպական երիտասարդական օլիմպիական փառատոնի բացման արարողությանը:

Մինչ այդ Հովիկ Աբրահամյանն այցելեց «Օլիմպիական ավան», հանդիպեց Եվրոպական երիտասարդական օլիմպիական փառատոնին Հայաստանը ներկայացնող պատվիրակության անդամներին:

Հայկական պատվիրակության հետ հանդիպման ժամանակ վարչապետն ասաց, որ եկել է ոգեւորելու ու հաղթանակ մաղթելու հայ մարզիկներին:

Հայաստանի վարչապետի ու հայ մարզիկների հանդիպմանը ներկա էին նաեւ Հայաստանի սպորտի եւ երիտասարդության հարցերով նախարար Գաբրիել Ղազարյանը եւ Վրաստանում Հայաստանի արտակարգ եւ լիազոր դեսպան Յուրի Վարդանյանը:

ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ

CAPSTONE-Ի ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՎՐԱՍՏԱՆՈՒՄ

Վրաստանի նախագահ Գիորգի Մարգվելաշվիլին հանդիպում ունեցավ պաշտոնական այցով Թբիլիսիում գտնվող CAPSTONE-ի պատվիրակությանը՝ գեներալ Ուիլյամ Ֆրեյզերի գլխավորությամբ:

Հանդիպմանը կողմերը քննարկեցին տարածաշրջանային անվտանգության եւ մարտահրավերների հետ առնչվող հարցեր: Խոսեցին վրաց-ամերիկյան հարաբերությունների եւ համաշխարհային սպառնալիքի դեմ պայքարում երկու երկրների համագործակցության մասին: Հանդիպմանն ընդգծվեց, որ Միացյալ Նահանգները Վրաստանի ռազմավարական գործընկերն է:

CAPSTONE-ի պատվիրակության անդամներն առանձնակի ընդգծեցին ՆԱՏՕ-ի առաքելություններում Վրաստանի մասնակցության նշանակությունը եւ վրացական կողմին շնորհակալություն հայտնեցին գլոբալ անվտանգության ապահովման գործում ներդրած ավանդի համար:

Հանդիպմանը ներկա էին Վրաստանի ազգային անվտանգության խորհրդի քարտուղար Իրինա Իմերլիշվիլին, նախագահի վարչակազմի ղեկավար Դավիթ Պատարաիան, նախագահի խորհրդականները:

ՎՐԱՍՏԱՆ-ՀԱՅԱՍՏԱՆ

ՆՈՐ ՊԱՅՄԱՆԱՎՈՐՎԱԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ՝ ԲԵՌՆԵՐԻ ՏԱՐԱՆՑԻԿ ՓՈԽԱԴՐՈՒՄՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱՑՄԱՆ ՀԱՐՑՈՎ

Ինչպես արդեն հաղորդել ենք, հուլիսի 26-ին, եռօրյա աշխատանքային այցով Վրաստան էր ժամանել Հայաստանի վարչապետ Հովիկ Աբրահամյանը:

Աշխատանքային այցի շրջանակում Հայաստանի վարչապետ Հովիկ Աբրահամյանը Վրաստանի վարչապետ Իրակլի Ղարիբաշվիլու հետ, հուլիսի 27-ին, այցելեցին վրաց-ռուսական սահմանին տեղակայված Կազբեգի-Լարս սահմանային եւ մաքսային անցակետ: Երկու երկրների կառավարությունների ղեկավարները տեղում ծանոթացան սահմանային անցակետի աշխատանքներին, զրուցեցին աշխատակիցների հետ: Հովիկ Աբրահամյանը, մասնավորապես, հետաքրքրվեց, թե ինչ խնդիրներ են ունենում Վրաստանի տարածքով Հայաստանից Ռուսաստան մեկնող մեքենաները, որքան ժամանակ է անհրաժեշտ փաստաթղթերը զննելու եւ համապատասխան ընթացակարգերն անցնելու համար: Հովիկ Աբրահամյանը զրուցեց նաեւ անցակետով Ռուսաստանի Դաշնություն մեկնող Հայաստանի քաղաքացիների հետ:

Շրջայցից հետո՝ երկու երկրների վարչապետերն ամփոփեցին այցի արդյունքները: Ձեռք բերված պայմանավորվածության համաձայն, վրաց-ռուսական սահմանի՝ Կազբեգի-Լարս անցակետի աշխատանքը կերկարացվի եւս 3,5 ժամով, այսինքն՝ վերջին մեկ ամսվա ընթացքում 6,5 ժամով, եւ նոր պայմանավորվա-

(Շարունակությունը՝ 2-րդ էջում)

ՔՆՆԱՐԿՎԵՑԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԽՈՐԱՑՄԱՆՆ ԱՌՆՉՎՈՂ ՀԱՐՑԵՐ

Հուլիսի 27-ին Վրաստանի աշխատանքի, առողջապահության, զբաղվածության եւ սոցիալական հարցերով նախարար Դավիթ Սերգեենկոյի հրավերով, եռօրյա աշխատանքային այցով, Թբիլիսիում էր գտնվում Հայաստանի առողջապահության նախարարության պատվիրակությունը՝ նախարար Արմեն Մուրադյանի գլխավորությամբ:

Այցի շրջանակներում կայացավ առողջապահության ոլորտի երկու երկրների ղեկավարների հանդիպումը: Հանդիպմանը Դավիթ Սերգեենկոն եւ Արմեն Մուրադյանը քննարկեցին առավել արդյունավետ համագործակցությանը վերաբերող հարցեր:

Բանակցությունների ավարտից հետո Դավիթ Սերգեենկոն եւ Արմեն Մուրադյանն այցելեցին «Ֆրիդոն Թոդուա» գիտահետազոտական ինստիտուտ, բժշկական այլ կազմակերպություններ: Հայաստանի առողջապահության նախարարը հանդիպում ունեցավ նաեւ դեղագործական ընկերությունների ներ-

(Շարունակությունը՝ 2-րդ էջում)

ԿՐԹԱԿԱՆ

ԹԱՄԱՐ ՍԱՆԻԿԻՁԵ. «ՆՈՐ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ՆՈՐԱՄՈՒԾՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ԱՌՆՉՎՈՒՄ ԵՆ ՄԱՆԿԱՎԱՐԺՆԵՐԻՆ»

ՆՈՐ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐԻՆ ԿՄԵԿՆԱՐԿԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 14-ԻՆ

Ինչպես հայտարարեց Վրաստանի կրթության եւ գիտության նախարար Թամար Սանիկիձեն, 2015-2016 թվականների ուսումնական տարին կմեկնարկի օրենքով սահմանված սեպտեմբերի 10-ին, հաջորդ առաջին երկուշաբթին՝ սեպտեմբերի 14-ին: Նոր ուսումնական տարում առաջին դասարան կգնան 41424 առաջին դասարանցիներ:

Մինչեւ նոր ուսումնական տարվա մեկնարկը մնացել է մեկուկես ամիս: Ի տարբերություն նախորդ տարիների, ընթացիկ ուսումնական տարում կրթության նախարարությունը շարունակելու է մի քանի ծրագրային նախագծերը, թեպետ հիմնական շեշտը դրվում է մանկավարժների մասնագիտական որակավորման բարձրացման հարցի վրա:

Ինչպես հայտարարեց Վրաստանի կրթության եւ գիտության նախարար Թամար Սանիկիձեն, աշակերտների համար գլխավորապես ծրագրային նորամուծությունները նախատեսել ենք ներդնել 2016-2017 ուսումնական տարվա համար: Խոսքը վերաբերում է նոր դասագրքերի կազմմանը: «Իսկ այս տարի հիմնական շեշտը դրվելու է մանկավարժների մասնագիտական որակավորման բարձրացման վրա»,- հայտարարեց նախարարը:

Անդրադառնալով նորամուծություններին, Թամար Սանիկիձեն նշեց, որ նախարարությունը պատվիրել է 125332 նոր նստարան:

«Մինչ օրս, դպրոցական գույքի պատրաստման հարցում չափորոշիչներն ու պարամետրերը չէին պահպանվում: Անթույլատրելի է, երբ առաջին դասարանցին եւ յոթերորդ դասարանցին նստում են միեւնույն չափի նստարանի վրա: Գոյություն ունեն համա-

(Շարունակությունը՝ 3-րդ էջում)

«ԹԲԻԼԻՍԻ-2015»

ԿԱՅԱՅԱՎ ԵՎՐՈՊԱԿԱՆ ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ՕԼԻՄՊԻԱԿԱՆ ՓԱՌԱՏՈՆԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԲԱՑՈՒՄԸ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

կը: «Այս խաղերը առաջընթաց քայլ են վրացական սպորտի կայուն զարգացման ճանապարհին: Ավելին, տարերքից հետո փառատոնը նշանակալիորեն կամրապնդի Թբիլիսին: Սպորտը բոլոր պայմաններում հուսադրող է եւ եվրոպական օլիմպիական ողջ ընտանիքը աջակցում է Վրաստանի ջանքերին»,- հայտարարեց Հիկկը:

Մարզական փառատոնին մասնակցում են 49 երկրի պատվիրակություններ: Մրցումներն անցկացվում են 9-ը մարզաձեւերում:

Նույն օրը Վրաստանի կառավարության ղեկավար Իրակլի Ղարիբաշվիլու անունից Եվրոպական երիտասարդական օլիմպիական փառատոնին մասնակից պատվիրակությունների ղեկավարների պատվին տրվել է պաշտոնական ճաշ:

ՕԼԻՄՊԻԱԿԱՆ ՇՔԱՆՇԱՆ՝ ՎՐԱՍՏԱՆԻ ՎԱՐՉԱՊԵՏԻՆ

Օլիմպիական շարժման զարգացման գործում ներդրած անձնական ավանդի համար, Վրաստանի վարչապետ Իրակլի Ղարիբաշվիլին պարգեւատրվել է Վրաստանի Օլիմպիական ազգային կոմիտեի բարձրագույն պարգեւով՝ Օլիմպիական շքանշանով: Պարգեւը վարչապետին հանձնեց Վրաստանի ազգային օլիմպիական կոմիտեի նախագահ Լերի Խաբելովը:

Վրաստանի վարչապետը պագեւի արժանացավ նաեւ երիտասարդական փառատոնի նախապատրաստման գործում ներդրած ավանդի համար: Պարգեւը հանձնեց Եվրոպական օլիմպիական կոմիտեի նախագահ Պատրիկ Հիկկը:

«ՈՍԿԵ ԳԵՂՄ» ՇՔԱՆՇԱՆ՝ ԵՕԿ-Ի ՆԱԽԱԳԱՀԻՆ

Հուլիսի 27-ին Վրաստանի նախագահ Գիորգի Մարգվելաշվիլին հանդիպում ունեցավ Եվրոպայի օլիմպիական կոմիտեի նախագահ Պատրիկ Հիկկի հետ: Հանդիպմանն ընդգծվեց Թբիլիսիում անցկացվող Եվրոպական երիտասարդական օլիմպիական փառատոնի նշանակությունը:

Վրացական սպորտի եւ օլիմպիական շարժման զարգացման միջազգային օլիմպիական ընտանիքում Վրաստանի ազգային օլիմպիական կոմիտեի ինտեգրման եւ Թբիլիսիում օլիմպիական փառատոնի անցկացման գործում ներդրած անձնական նշանակալից ավանդի համար, Վրաստանի նախագահը Եվրոպական օլիմպիական կոմիտեի նախագահին պարգեւատրեց «Ոսկե գեղմ» շքանշանով:

Պարգեւատրման արարողությունը տեղի ունեցավ նախագահի Հավլաբարի նստավայրում: Արարողությանը ներկա էին նախագահի աշխատակազմի ղեկավար Դավիթ Պատարաիան, Վրաստանի Օլիմպիական ազգային կոմիտեի նախագահ Լերի Խաբելովը եւ «Թբիլիսի-2015» փառատոնի կազմկոմիտեի նախագահ Ալեքսի Ախվլեդիանին:

ԵՆԹԱԿԱՌՈՒՅՑ

ԹԵԱ ԾՈՒԼՈՒԿԻԱՆԻ. «ԳԼԽԱՎՈՐ ԱՌԱՋՆԱՀԵՐԹՈՒԹՅՈՒՆԸ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆՆԵՐՈՒՄ ԵՆԹԱԿԱՌՈՒՅՑՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՈՒՄՆ Է»

Հուլիսի 27-ին Վրաստանի արդարադատության նախարար Թեա Ծուլուկիանին Փոթիում հանդիսավոր պայմաններում բացեց արդարադատության՝ երկրի մասշտաբով թվով 14-րդ տունը:

Ելույթ ունենալով Արդարադատության տան բացմանը, Թեա Ծուլուկիանին հայտարարեց. «Արդարադատության նախարարության կարգախոսն է. «Աշխատենք երկրի առաջընթացի համար», իսկ դա նախատեսում է բարեփոխումներ, մասնավորապես, օրենսդրական, իրավական, քրեական, մասնավոր եւ արդյունաբերական իրավունքի, գաղթի, կանանց եւ երեխաների իրավունքների բարեփոխումներ: Սակայն դա միայն մի ուղղություն ունի, իսկ երկրորդը՝ Արդարադատության նախարարության ենթակառույցների զարգացումն է, առանձնապես շրջաններում եւ գյուղերում: Հենց այդ պատճառով էլ իրականացնում ենք արդարադատության տների, իսկ գյուղերում՝ հասարակական կենտրոնների աննախընթաց շինարարությունը: Միաժամանակ, լայն թափ է հաղորդվել նախարարության ազգային արխիվի տարածաշրջանային գրասենյակների եւ պահեստարանների շինարարությանը: Արդարադատության տներ են բացվել Ախալքալաքիում, Ղազբեգիում, Թիանեթիում, Բորժոմիում, Մցխեթայում, հասարակական կենտրոններ տարբեր գյուղերում, մասնավորապես, Նինոծմինդայի շրջանի Փոկա գյուղում: Ազգային արխիվներ կբացվեն Զուգդիդիում, Ախալցիխեում, Քութայիսիում: Նախարարի խոսքերով, ներկա դրությամբ, երկրի բոլոր խոշոր քաղաքներում գործում են արդարադատության տներ, որտեղ, ընդհանուր առմամբ, աշխատում է 23 հազար մարդ:

ՎՐԱՍՏԱՆ-ՀԱՅԱՍՏԱՆ

ՆՈՐ ՊԱՅՄԱՆԱՎՈՐՎԱԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ՝ ԲԵՌՆԵՐԻ ՏԱՐԱՆՑԻԿ ՓՈԽԱԴՐՈՒՄՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱՑՄԱՆ ՀԱՐՑՈՎ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

ծության համաձայն կգործի 05.30-24.00-ն: Հիշեցնենք, որ մոտ մեկ ամիս առաջ եւս, երկու վարչապետերի քննարկման արդյունքում աշխատանքային գրաֆիկը 3 ժամով ավելացել էր (06.00-18.00-ի փոխարեն սահմանվել էր 06.00-21.00):

Կողմերը քննարկեցին վրացական անցակետում հայկական բեռնատարների խցանումները նվազագույնի հասցնելու, ինչպես նաեւ Հայաստանից վրացական անցակետով կազմակերպվող արտահանումների գործընթացը դյուրացնելու հետ կապված մի շարք հարցեր: Անդրադարձ կատարվեց նաեւ վրաց-հայկական սահմանին կառուցվելիք «Բարեկամության» կամրջի շինարարության հարցին: Կողմերը պայմանավորվեցին արագ ժամկետներում սկսել կառուցման գործընթացը:

Երկու երկրների վարչապետերի քննարկման օրակարգում էին նաեւ Վրաստանը Ռուսաստանին կապող մայրուղու այն հատվածների հարցերը, որտեղ մշտապես սողանքների, քարաթափման վտանգ կա: Վրացական կողմը տեղեկացրեց, որ նախատեսում է քայլեր ձեռնարկել ճանապարհահատվածն առավել անվտանգ դարձնելու ուղղությամբ: Այդ նպատակով, մասնավորապես, նախատեսվում է իրականացնել ճանապարհի լայնացման, ինչպես նաեւ լուսավորման հետ կապված աշխատանքներ:

Հայաստանի վարչապետին աշխատանքային այցի ընթացքում ուղեկցում էր Վրաստանում Հայաստանի արտակարգ եւ լիազոր դեսպան Յուրի Վարդանյանը:

ՔՆՆԱՐԿՎԵԾԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԽՈՐԱՑՄԱՆՆ ԱՌՆՉՎՈՂ ՀԱՐՑԵՐ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

կայացուցիչների հետ:

Այցի ավարտին՝ Արմեն Մուրադյանն ու պատվիրակության անդամները մեկնեցին Սամցխե-Ջավախեթիի տարածաշրջան: Հայաստանի առողջապահության նախարարը ծանոթացավ Ախալցիխեի եւ Ախալքալաքիի բժշկական կենտրոնների գործունեությանը:

Պատվիրակության անդամներն այցելեցին Ախալքալաքիի «Ունիմեդ-Սամցխե» բժշկական կենտրոն: Ախալքալաքիի առողջապահության ոլորտի աշխատակիցները Արմեն Մուրադյանին ներկայացրին այժմ հիմնանորոգման փուլում գտնվող բժշկական կենտրոնում մատուցվող ծառայությունները, գործիքակազմը:

Արմեն Մուրադյանն այցելեց նաեւ կենտրոնում բուժում ստացող հիվանդներին, հետաքրքրվեց նրանց առողջական վիճակով: Նա եղավ նաեւ ծննդաբերական բաժանմունքում:

«Ունիմեդ-Սամցխե» բժշկական կենտրոնը հիմնանորոգման ավարտից եւ նորագույն սարքավորումներով համալրվելուց հետո՝ այցելուների առջեւ իր դռները կբացի ընթացիկ տարվա հոկտեմբերին:



ՕՐԱԿԱՐԳՈՒՄ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՐՑԵՐՆ ԷԻՆ ՈՒ «ԱԶԳԱՅԻՆ ԲԱՆԿԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԸ

Հուլիսի 30-ին Վրաստանի վարչապետ Իրակլի Ղարիբաշվիլին հանդիպում ունեցավ Վրաստանում Արժույթի միջազգային հիմնադրամի ներկայացուցիչ Ազիմ Սադիկովի հետ: Հանդիպմանը կողմերը քննարկեցին տնտեսական հարցերն ու «Ազգային բանկի մասին» օրենքը: Հանդիպմանը Վրաստանի վարչապետն առանձնակի ընդգծեց Արժույթի միջազգային հիմնադրամի կողմից Վրաստանին ցուցաբերած օգնության կարեւորությունը: Հանդիպմանը քննարկվեցին նաեւ առաջիկա համագործակցության հեռանկարները:

ՄԵԿ ՄԻԼԻՈՆ ԼԱՐԻ՝ ՎԻՐԱՎՈՐ ԶԻՆԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ԲՈՒԺՄԱՆ ՀԱՄԱՐ

Ինչպես հայտարարեց Վրաստանի պաշտպանության նախարար Թինա Խիդաշելին, Բիձինա Իվանիշվիլին վիրավոր զինծառայողների բուժման համար հատկացրել է 1 միլիոն լարի: «Նախարար նշանակվելուց հետո, ես դիմեցի Բիձինա Իվանիշվիլուն՝ վիրավոր զինծառայողների բուժման համար միջոցներ հատկացնելու խնդրանքով: Բիձինա Իվանիշվիլին ըմբռնումով ընդունեց ասվածը»,- հայտարարեց Թինա Խիդաշելին:

ԲՆԱԿՏԱՐԱԾՔ՝ 620 ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻ

Վրաստանի կառավարությունը որոշում է ընդունել Աբխազիայից փախստական 620 ընտանիքների բնակտարածք հանձնելու վերաբերյալ: Այդ մասին կառավարության նիստում հայտարարեց Իրակլի Ղարիբաշվիլին: Միաժամանակ, վարչապետը ողջունեց գյուղատնտեսության նախարարության՝ բռնազավթման գծի երկայնքով ապրող վրացական գյուղերի բնակիչներին անհատույց տեխնիկական օգնություն ցուցաբերելու մասին որոշումը:

ՊԱՐՏԱԴԻՐ ԶԻՆԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆԸ ԿՎԵՐԱՑՎԻ՞

Ինչպես հայտարարեց Վրաստանի պաշտպանության նախարար Թինա Խիդաշելին, պարտադիր զինծառայության վերացման հարցը հիմնարար քննարկման կարիք ունի: Ինչպես նշեց նախարարը, ինքը պատրաստ է ներկայանալ խորհրդարանին ու անվտանգության կոմիտեի հետ ցանկացած ձեւաչափով քննարկել վերոնշյալ հարցը: Անդրադառնալով այն հարցին, թե որքանով է խտրական այն մոտեցումը, ըստ որի, ցանկացած քաղաքացի վճարելով 2 հազար լարի՝ կարող է ստանալ զինծառայության տարեկտում, այն դեպքում, երբ բոլորը չէ, որ կարող են օգտվել նման արտոնությունից, Թինա Խիդաշելին նշեց, որ գոյություն ունեն հանգամանքներ, որոնց առկայության դեպքում. պարտադիր զինծառայության տարեկտումը դառնում է անհրաժեշտություն:

ՆԱԽԿԻՆ «ԱԶԳԱՅԻՆՆԵՐԸ» ԿԱԶՄԵԼՈՒ ԵՆ ՆՈՐ ԽՄԲԱԿՑՈՒԹՅՈՒՆ

«Ազգային շարժման» շարքերը լքած պատգամավորները մտադիր են խորհրդարանում հիմնել նոր խմբակցություն: Այդ մասին հայտարարեց ազգայինների շարքից հեռացածներից Պավլե Կուբլաշվիլին: «Մենք ծրագրում ենք խմբակցությունը ստեղծել սեպտեմբերին: Ելնելով քաղաքական նկատառումներից, խմբակցության կազմման հետ մանրամասները չենք հաղորդի»,- հայտարարեց Կուբլաշվիլին՝ խորհրդարանի նախագահ Դավիթ Ուսուփաշվիլու հետ հանդիպումից հետո: Ինչպես նշեց Կուբլաշվիլին, խորհրդարանի խոսնակի հետ քննարկվել են նոր խմբակցության կազմավորման, ինչպես նաեւ «Ազգային շարժումից» հեռացած պատգամավորների պարտադիր զինծառայության հետ կապված առաջարկության հարցերը:

Ճաբաթից շաբաթ. Փաստեր եւ իրադարձություններ

ՀԱՂՈՐԴՈՒՄ ԵՆ «ՎՐԱՍՏԱՆԻ» ԵՎ ԼՐԱՏՎԱԿԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԹՂԹԱԿԻՑՆԵՐԸ

ԿՐԹԱԿԱՆ

ԹԱՄԱՐ ՍԱՆԻԿԻՋԵ. «ՆՈՐ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ՆՈՐԱՄՈՒԾՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ԱՌՆՉՎՈՒՄ ԵՆ ՄԱՆԿԱՎԱՐԺՆԵՐԻՆ»

(Սկիզբը՝ 1-ին էջում)

պատասխան չափորոշիչներ, եւ նախարարությունը ներկայումս պատվիրել է նստարաններ՝ ելնելով այդ չափորոշիչներից,- հայտարարեց նախարարը:

Նախարարի խոսքերով, երկրի 223 հանրային դպրոցներում գործող բժշկական կաբինետներին կավելանա եւս 74 հանրային դպրոցներում բացված կաբինետները:

Նախարարի խոսքերով, նոր ուսումնական տարին մի շարք շրջանների, այդ թվում՝ Ախալքալաքիի շրջանի Բուղաշենի աշակերտները կդիմավորեն նոր շենքում: Նոր դպրոցում կսկսեն ուսուցանել նաեւ Թբիլիսիի թիվ 103 վրաց-հայկական դպրոցի աշակերտները: Նախարարի խոսքերով, նոր ուսումնական տարին նոր դպրոցում կդիմավորեն 2984 աշակերտներ: Նոր դպրոցների շինարարության վրա ծախսվել է 18 888 456 լարի: Տասնութ դպրոցներում նորացվել են մարզահրապարակները, մասնակի վերանորոգումներ են իրականացվել 350 հանրային դպրոցներում: Այս տարի նախարարությունը ծրագրում է իրականացնել 20 հանրային դպրոցի նախագծումը, որից վեցի շինարարությունը կսկսվի արդեն այս տարի: Այդ նպատակով, հատկացվել է 85 203 970 լարի:

ՄԱՅԱ ՄԻՄԻՆՈՇՎԻԼԻ. «ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱՌՄԱՄԲ ՄԻԱՍՆԱԿԱՆ ԱԶԳԱՅԻՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ ԲԱՎԱՐԱՐ ԵՆ»

Հուլիսի 27-ին Վրաստանի քննությունների եւ գնահատումների ազգային կենտրոնի www.naec.ge կայքէջում հրապարակվեցին միասնական ազգային քննությունների արդյունքները: Առաջին տվյալները վերաբերում էին ընդհանուր ունակությունների եւ հիմնական առարկայի քննությանը:

Ինչպես հայտարարեց քննությունների ազգային կենտրոնի տնօրեն Մայա Միմինոշվիլին, ընդհանուր ունակությունների քննություններին դիմորդների 13 տոկոսը չկարողացավ հաղթահարել նվազագույն արգելագիծը: «Ընդհանուր առմամբ, ընդհանուր ունակությունների քննության արդյունքները բավարար են»,- հայտարարեց Մայա Միմինոշվիլին:

Նրա խոսքերով, քննությանը ներկայացված չորս թեսթերի չորս տարբերակները միջին բարդության էին եւ բարդության տեսանկյունից նման էին: Սակայն կենտրոնը տարբերակները միշտ համեմատում է եւ վիճակագրական վերլուծությամբ սահմանվեց, որ առաջին եւ չորրորդ տարբերակները մի փոքր ավելի բարդ էին: Դրա հաստատումից հետո որոշվեց սահմանել տարբեր միավորներ: Երկրորդ եւ երրորդ տարբերակների համար անցումային միավորը 24-ն էր, իսկ առաջին եւ չորրորդի համար՝ 23-ը:

«Մրցույթին մասնակցում էին նաեւ այն դիմորդները, որոնք լրացրել են առաջին եւ չորրորդ տարբերակները եւ հավաքել են 23 միավոր»,- հայտարարեց Միմինոշվիլին:

Նրա խոսքերով, դիմորդներից մեկը թեստի լրացումից հետո ստացել է միավորների առավելագույն քանակությունը՝ 80: Անցյալ տարի դիմորդներից ոչ մեկին չէր հաջողվել հասնել նման հաջողության:

Մայա Միմինոշվիլու խոսքերով, նվազագույն արգելագիծը դիմորդների 13 տոկոսը չի հաղթահարել: Դրանք պետք է ավելացնեն նաեւ դիմորդների այն 3 տոկոսը, որոնք քննությանը չեն ներկայացել:

Առարկայական քննությունների արդյունքները քննությունների կենտրոնը կհրապարակի մինչեւ օգոստոսի 5-ը:

ԿԱՅԱԾԱՎ «ՍՈՎՈՐԵՆՔ ՎՐԱԾԵՐԵՆ» ՆԱԽԱԳԾԻ ԵԶՐԱՓԱԿԻՉ ԱՐԱՐՈՂՈՒԹՅՈՒՆԸ

Հուլիսի 25-ին Վրաստանի նախագահի Հավլաբարի նստավայրում տեղի ունեցավ «Սովորենք վրացերեն» նախագծի եզրափակիչ արարողությունը:

Միջոցառմանը մասնակցեցին Վրաստանի տարածաշրջանների ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչները, ովքեր նախագծի շրջանակներում անցան վրաց լեզվի դասընթացները, ինչպես նաեւ Թբիլիսիի պետհամալսարանի դասախոսները: Ներկաներին դիմեցին Վրաստանի նախագահի աշխատակազմի ղեկավար Դավիթ Պատարաիան եւ պետհամալսարանի ռեկտոր, ակադեմիկոս Լադո Պապավան: Վրաց լեզվի դասընթացներն ավարտողներին հանձնվեցին հավաստագրեր: «Վրաստանի նախագահի հիմնադրամը» ֆինանսավորեց ազգային փոքրամասնություններով հոծաբնակ տարածաշրջաններում վրաց լեզվի արագընթաց ուսուցման ծրագիրը: Այն անվճար էր բոլոր ցանկացողների համար: Վրաստանի բոլոր քաղաքացիները պետք է մասնակցեն պետականության շինարարությանը, իսկ դրա գլխավոր գործոնը վրաց լեզվի իմացությունն է եւ, որի հնարավորությունը նախագահական հիմնադրամի շնորհիվ մենք ընձեռեցինք մեր քաղաքացիներին»,- հայտարարեց ազգային փոքրամասնությունների հարցերով նախագահի խորհրդական Սոփիո Շամանիդին:

ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ

ՇՈՒՐՋ 200 ԱՆՈՒՆ ԴԵՂՈՐԱՅՔ ԿԷԺԱՆԱՆ

Ենթադրաբար, արդեն սեպտեմբերին շուրջ 200 անուն դեղորայքի գինը զգալիորեն կնվազի: Այդ մասին հայտարարեց Վրաստանի առողջապահության նախարար Դավիթ Սերգեենկոն: Նրա խոսքերով, գնի նվազեցումը կկազմի առնվազն 50 տոկոս:

«Նաեւ հաջորդ տարվա համար մենք պետք է հասնենք ավելի քան հազար անուն դեղորայքի գնի նվազեցման, դեղորայք, որոնք նախատեսված են քրոնիկական հիվանդությունների համար: Ինչպե՞ս ենք դա իրականացնելու: Դրա համար անհրաժեշտ է խուսափել բժիշկների կողմից ոչ կարեւոր շատ դեղորայքի դուրսգրումից, ինչը առողջապահության որակի ու որակի վերահսկողության բաղադրիչն է եւ, երկրորդը՝ պետք է մեծացնել մրցակցության մակարդակը դեղորայքի շուկայում: Այսինքն, Վրաստան պետք է մուտք գործեն նոր ընկերություններ: Վերջին հանգամանքի արգելքը, երկրում դեղորայքի որակի վերստուգման համապատասխան, լաբորատորիայի բացակայությունն է: Կարծում եմ, արդեն աշնանը, մենք կկարգավորենք այդ հարցը»,- հայտարարեց Սերգեենկոն՝ հավելելով, որ վրացական շուկա գրանցված է ավելի քան 15 հազար անուն դեղորայք, որոնցից կենսական կարեւորություն են ներկայացնում հազարից ոչ ավելին:

Նախարարի հավաստմամբ, դեղորայքի սակագնի վերին մակարդակի սահմանում չի նախատեսվում:

ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆ

ՕՐԻՆԱՆԱԽԱԳԻԾԸ ՆԱԽԱՏԵՍՈՒՄ Է ԿԱՐԵՎՈՐ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԲԱՐՁՐԱԼԵՌ ԵՐԿՐԱՄԱՍԵՐԻ ՀԱՄԱՐ

Ինչպես արդեն հաղորդել ենք, Վրաստանի խորհրդարանն ընդունել է «Վրաստանի բարձրալեռ տարածաշրջանների մասին» օրինանախագիծը: Վրաստանի տարածաշրջանային զարգացման եւ ենթակառույցների փոխնախարար Թենգիզ Շերգելաշվիլու հայտարարությամբ, օրինանախագծով փոփոխություններ են կատարվել տեղական ինքնակառավարման օրենսգրքում:

Փոխնախարարի հայտարարությամբ, օրինանախագիծը նախատեսում է բարձրալեռ տարածաշրջանների հարցով ազգային խորհրդի հիմնում, որը գլխավորելու է երկրի վարչապետը: Խորհրդի կողմից մշակած առաջարկությունների հիման վրա, կառավարությունը որոշակի չափորոշիչների հաշվառմամբ, կշնորհի բարձրալեռ բնակավայրերի կարգավիճակը: Դա նշանակում է, որ նման բնակավայրերում գտնվող ձեռնարկությունները կօգտվեն հարկային արտոնություններից, իսկ տեղի բնակիչները՝ սոցիալական արտոնություններից: Օրինակ, ինչպես նշեց փոխնախարարը, կսահմանվեն ֆինանսական նպաստներ բոլոր նորածինների համար մեկ տարվա ժամկետով, իսկ երկրորդ եւ հաջորդ երեխաների համար՝ երկու տարվա ժամկետով: Մանկավարժներն ու բժշկական աշխատողները, աշխատավարձից բացի, կունենան հավելավճար, իսկ կենսաթոշակառուները, որպես սոցիալական օգնություն՝ արտոնություններ կստանան էլեկտրաէներգիայի եւ բնական գազի մուծումներում:

Հիշեցնենք, որ օրինախագիծը մշակվել էր Վրաստանի տարածաշրջանային զարգացման եւ ենթակառույցների նախարարության կողմից:



ԱՄՆ

455 ՄԻԼԻԱՐԴ ԴՈԼԱՐՈՎ ԲՅՈՒՋԵԻ ՊԱԿԱՍՈՒՐԴ

ԱՄՆ-ի բյուջեի պակասուրդը 2015 ֆինանսական տարում կկազմի 128 միլիարդով պակաս, քան փետրվարին սպասվում էր: Այս մասին ասված է տարածված միջանկյալ մեկնաբանության մեջ, որն ստորագրել է Սպիտակ տան վարչա-բյուջետային վարչության տնօրեն Շոն Դոնովանը:

Նրա խոսքով՝ ընթացիկ տարում պակասուրդը կկազմի համախառն ներքին արդյունքի (ՀՆԱ) 2,6 տոկոսը, ինչը գործնականում 30 միլիարդով քիչ է անցյալ տարվա պակասուրդի ցուցանիշից եւ 128 միլիարդով պակաս, քան կանխատեսվել էր փետրվարին»: Բացի դրանից, սպասվում է, որ հետագա երեք տարիներին բյուջեում միջոցների պակասությունը կշարունակի նվազել մինչեւ ՀՆԱ-ի 2,4 -2,2 տոկոսի մակարդակ:

ԵՎՐԱՄԻՈՒԹՅՈՒՆ

ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԴԵՄ ՊԱՏԺԱՄԻՋՈՑՆԵՐԸ ԵՐԿԱՐԱՁԳՎԵԼ ԵՆ

ԵՄ անվտանգության եւ արտաքին քաղաքականության հարցերով բարձրագույն ներկայացուցիչ Ֆեդերիկա Մոգերինին հայտարարել է, որ եվրոպական 7 երկիր՝ Չեռնոգորիան, Ալբանիան, Իսլանդիան, Նորվեգիան, Լիխտենշտեյնը, Ուկրաինան եւ Վրաստանը ԵՄ խորհրդին հաստատել են Ղրիմի եւ Սեւաստոպոլի դեմ պատժամիջոցների կիրառումը մինչ 2016 թվականի հունիսի 23-ը երկարաձգելու իրենց որոշումը: Այդ երկրներից 6-ը, բացի Վրաստանից, նաեւ միացել են ԵՄ-ի կողմից ՌԴ-ի նկատմամբ տնտեսական պատժամիջոցները մինչ 2016 թվականի հունվարի 31-ը երկարաձգելու որոշմանը:

Ինչպես հայտարարեց Վրաստանի վարչապետի՝ Ռուսաստանի հետ հարաբերությունների գծով հատուկ ներկայացուցիչ Զուրաբ Աբաշիձեն, Վրաստանը չի ծրագրում միանալ Ղրիմի եւ Սեւաստոպոլի դեմ Եվրամիության բոլոր պատժամիջոցների կիրառմանը:

Աբաշիձեի խոսքով, հունիսի 19-ին Վրաստանն ավտոմատ կերպով է մեկ տարի ժամկետով երկարաձգել Ղրիմից եւ Սեւաստոպոլից արտադրանքի ներկրման արգելքը: «ՌԴ-ի դեմ ԵՄ-ի այլ պատժամիջոցներին մեր երկրի միանալու խոսակցություն չկա»,- ասաց Աբաշիձեն:

ԹՈՒՐՔԻԱ

ԱՐՏԱՀԵՐԹ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՉԵՆ ԲԱՑԱՌՎՈՒՄ

Թուրքիայի նախագահ Ռեջեփ Թայիփ Էրդողանը հայտարարել է, որ յուրաքանչյուր օրվա հետ նվազում է երկրում կոալիցիոն կառավարություն ձեւավորելու հնարավորությունը եւ չի բացառվում, որ Թուրքիայում կարող են արտահերթ խորհրդարանական ընտրություններ անցկացվել:

Թուրքիայի փոխվարչապետ Յալչին Աքդողանն ավելի վաղ հայտարարել էր, որ ընտրությունների արդյունքներով պատգամավորական աթոռների քանակով երկրորդ տեղը զբաղեցրած ժողովրդահանրապետական կուսակցությունը (ԺՀԿ) խորհրդարանում ներկայացված մնացած կուսակցություններից ավելի մոտ է իշխող «Արդարություն եւ զարգացում» կուսակցության (ԱԶԿ) հետ կոալիցիոն կառավարություն ստեղծելուն:

Թուրքիայի վարչապետ Ահմեթ Դավութօղլուն հայտնել էր, որ Ազգայնական շարժում կուսակցությունը հրաժարվել է կոալիցիոն կառավարությանը մաս կազմելու ԱԶԿ-ի առաջարկից, իսկ խորհրդարան անցած մյուս՝ քրդական Ժողովուրդների դեմոկրատական կուսակցության հետ կոալիցիա կազմել իրենք չեն ցանկանում:

ՍԱԿԱԳԻՆ

ՍՈՑԻԱԼԱՊԵՍ ԱՆՊԱՇՏՊԱՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԷԼԵԿՏՐԱԷՆԵՐԳԻԱՅԻ ՀԻՆ ՈՒ ՆՈՐ ՍԱԿԱԳՆԵՐԻ ՏԱՐԲԵՐՈՒԹՅՈՒՆԸ ԿՄԱՐԻ ՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ

Վրաստանի վարչապետ Իրակլի Ղարիբաշվիլու հայտարարությամբ, Վրաստանի կառավարությունը բյուջեից կմարի սոցիալապես անպաշտպան ընտանիքների էլեկտրաէներգիայի հին ու նոր սակագների միջեւ տարբերությունը:

Նրա խոսքերով, նախարարների խորհուրդը մշակել է տարածաշրջաններում էլեկտրաէներգիայի մեկ կիլովատտ հաշվով սակագնի 3,95 թեթրիով թանկացման եւ Թբիլիսիում սակագնի հնարավոր բարձրացման փոխհատուցման չորս նախագիծ: Վարչապետը նշեց, որ սոցիալապես անպաշտպան ընտանիքների թիվը, նախնական հաշվարկներով, հասնում է 205 հազարի եւ վերոնշյալ պարտքի մարման համար բյուջեից կպահանջվի 20 միլիոն լարի:

«Մենք դիմում ենք այդ քայլին, քանի որ մեր կառավարությունն ստանձնել է սոցիալական պարտավորություններ, եւ մենք թույլ չենք տա էլեկտրաէներգիայի սակագնի բարձրացման անհրաժեշտությունից մեր քաղաքացիները տուժեն»,- հայտարարեց վարչապետը:

«Եթե էներգետիկայի եւ ջրամատակարարման կարգավորման ազգային հանձնաժողովը չընդուներ սակագնի ավելացման որոշումը, ապա ընկերությունը չէր կարողանա բնակչությանն անխափան մատակարարել էլեկտրաէներգիա»,- հայտարարեց վարչապետը: Նա հիշեցրեց, որ, երեք տարի առաջ՝ իշխանափոխությունից հետո, «Վրացական երազանք» կոալիցիան հնարավոր համարեց էլեկտրաէներգիայի սակագինը նվազեցնել 4 թեթրիով: Դրա նախաձեռնողը նախկին վարչապետ Բիձինա Իվանիշվիլին էր: «Նման քայլ Վրաստանի ոչ մի կառավարություն չի կատարել: Այդ որոշմամբ բնակչությունը կարողացավ տնտեսել 150 միլիոն լարի: Այսօր իրավիճակը փոխվել է ոչ միայն մեր երկրում, այլեւ տարածաշրջանում, ինչն էլ հանգեցրեց սակագնի վերանայմանը: Չնայած դրա ավելացմանը, այսօր սակագինը Վրաստանում ամենանվազն է տարածաշրջանի մյուս երկրների համեմատությամբ»,- հայտարարեց Իրակլի Ղարիբաշվիլին:

ԹԲԻԼԻՍԻԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆԻ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ

Թբիլիսիի քաղաքապետարանը տարածել է հայտարարություն, որտեղ նշված է, որ նախօրեին քաղաքապետ Դավիթ Նարմանիայի հայտարարությունը էլեկտրաէներգիայի սակագնի հնարավոր բարձրացման կապակցությամբ, երկակի արձագանք է առաջացրել, ուստիեւ քաղաքապետարանը նշում է, եթե էներգետիկայի եւ ջրամատակարարման կարգավորման ազգային հանձնաժողովն ընդունի որոշում մայրաքաղաքում էլեկտրաէներգիայի բարձրացման վերաբերյալ, սոցիալապես անպաշտպան ընտանիքները, որոնց վարկանիշային միավորը 70 հազարից քիչ է, ավելացած սակագնի համար կստանան քաղաքապետարանի ֆինանսավորումը:

Ինչպես նշեցին քաղաքապետարանում, «ԹԷԼԱՍԻ» բաժնետիրական ընկերությունը, ազգային հանձնաժողովին՝ սակագնի կապակցությամբ դիմել է հուլիսի 23-ին: Ընկերությունը պահանջում է սահմանել նոր սակագին եւ գլխավոր հիմնավորումը ազգային տարադրամի կտրուկ փոփոխությունն է, ինչպես նաեւ ներկրվող էլեկտրաէներգիայի գնի ավելացումն ու էլեկտրաէներգիայի փոխանցման սակագնի բարձրացումը:

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ

ԳԻՈՐԳԻ ԿՎԻՐԻԿԱՇՎԻԼԻ. «ԱՌԱՋԻԿԱՅՈՒՄ ԼԱՐԻԻ ՓՈԽԱՐԺԵՔԸ ԿԿԱՅՈՒՆԱՆԱ»

Հուլիսի 29-ին, Վրաստանի վարչապետ Իրակլի Ղարիբաշվիլին, փոխվարչապետ, էկոնոմիկայի նախարար Գիորգի Կվիրիկաշվիլին եւ գյուղատնտեսության նախարար Օթար Դանելիան եղան «Վրացական մթերք» նոր արտադրության բացմանը:

Ինչպես հայտարարեց Վրաստանի փոխվարչապետ, էկոնոմիկայի նախարար Գիորգի Կվիրիկաշվիլին, այն, որ լարիի կուրսը չհաստատվեց նախորդ բնագծում, զարմանալի չէ, քանի որ մեր առեւտրական գործընկերների մոտ տեղական տարադրամն արժեզրկվել է: Նրա խոսքերով, այսօրվա դրությամբ, լարիի կուրսի տատանում չի գրանցվում: «Ընդհանուր առմամբ, տեղի է ունենում դոլարի ամրացում: Մենք հետեւում ենք այդ ուղղությամբ աշխարհում եւ մեր տարածաշրջանում տեղի ունեցող իրադարձություններին: Բացի այդ, ցածր մակարդակի վրա էր նավթի արժեքը, ինչն ինքնին նվազեցնում է ներդրումների հնարավորությունը»,- հայտարարեց Գիորգի Կվիրիկաշվիլին եւ հավելեց, որ Վրաստանի գլխավոր ներդրողները նավթարդյունաբերական երկրներն են:

ԲԱՁԱՅՈՒՄ ՄԻԱՅՆԱԿ ԿԵՆՍԱԹՈՇԱԿԱՌՈՒՆԵՐԻ ԳՈՐԾԱԿԻՑԸ ՄԵԾԱՆՈՒՄ Է

Վրաստանի առողջապահության նախարար Դավիթ Սերգեենկոյի հայտարարությամբ, Վրաստանում սոցիալապես անպաշտպան անձանց կարգավիճակ ունեցող քաղաքացիների ցուցակն անընդմեջ փոփոխվում է:

«Սոցիալական օգնություն ստացող մարդկանց թիվը մշտապես փոխվում է: Միջինը ամսվա հաշվառմամբ՝ 5 հազարի չափով, փոփոխությունների կիզակետը 2012 թվականն էր: Դրանից հետո, գնահատումների չափորոշիչներում կատարվեցին շուրջ տասնյակ փոփոխություններ, որպեսզի գնահատման գործընթացը լինի առավել թափանցիկ ու արդարացի»,- հայտարարեց նախարարը:

Ներկա դրությամբ, սոցիալական սպասարկման գործակալության տվյալներով, Վրաստանում գրանցված է 377,9 հազար սոցիալապես անպաշտպան անձ, ինչը կազմում է բնակչության 10,1 տոկոսը:

Նշենք, որ սոցիալապես անպաշտպան անձի կարգավիճակ տրվում է այն քաղաքացիներին, ովքեր բարօրության չափորոշիչների գնահատման արդյունքներով ստանում են դրա համար անհրաժեշտ միավորների քանակությունը: Կախված սահմանած միավորների քանակությունից, սոցիալական օգնության չափը ընտանիքի յուրաքանչյուր անդամի հաշվով տատանվում է 30-ից մինչեւ 60 լարիի սահմաններում: Սոցիալապես անպաշտպան ընտանիքները, որոնց տրվել է միավորների առավելագույն քանակությունը, մինչեւ 16 տարեկան երեխաների համար ամսական ստանում են 10-ական լարի:

Դավիթ Սերգեենկոյի հայտարարությամբ, սոցիալական բազայում մեծանում է միայնակ կենսաթոշակառուների գործակիցը: Նախարարի խոսքերով, այդ անձանց համար միավորների հաշվարկի նոր չափորոշիչները ներկայացվել են կառավարությանը: Խոսքը վերաբերում է այն միայնակ կենսաթոշակառուներին, ում նոր սխեմայի մշակումից հետո նպաստների հանձնումը դադարեցվել էր: Նոր համակարգի ներդրումից հետո, նպաստների հանձնումը կշարունակվի, նաեւ՝ կփոխհատուցվի այն գումարը, որից նրանք զրկվել էին:

Մեկնաբանելով էլեկտրաէներգիայի սակագնի բարձրացման եւ այդ առումով կառավարության կողմից նպաստների հատկացման թեման, Դավիթ Սերգեենկոն հայտարարեց, որ նպաստների սոցիալական ուղղվածությունն ընդունված է ոչ միայն քաղաքականությունում, այլեւ էկոնոմիկայում: Նրա խոսքերով, կառավարությունը հնարավորինս կանի սոցիալապես անպաշտպան ընտանիքների հիմնախնդրի կարգավորման ուղղությամբ:

ՎՐԱՍՏԱՆՈՒՄ ԿԳՈՐԾԻ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ՆՈՐ ՀԱՄԱԿԱՐԳ

Վրաստանի կառավարությունը մշակել է կենսաթոշակառուների սոցիալական անպաշտպանության համակարգի զարգացման նոր հիմնադրույթ:

Ինչպես հայտարարեց սոցիալական սպասարկման գործակալության տնօրեն Զազա Սոպրոմաձեն, օգոստոսի 1-ից երկրում կսկսի գործել սոցիալական նոր համակարգ:

«Օրենսդրության փոփոխությունները մեզ թույլ կտան վերանայել կենսական նվազագույնի հաշվարկման համակարգը եւ առանձին կատեգորիայի կենսաթոշակառուների համար վերականգնել պետական սոցիալական օգնությունը»,- հայտարարեց Սոպրոմաձեն:

Նրա խոսքերով, սոցիալական օգնության հանձնումը կվերականգնվի շուրջ 3 հազար կենսաթոշակառուների համար, որոնք վերջին մի քանի ամիսների ընթացքում զրկված էին դրանից:

«ՎՐԱՍՏԱՆԻ» ՏԵՂԵԿԱՏՈՒ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԱՐՁԱԿՈՒՐԴՆԵՐԻ ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐԸ

Բուռն ընթացքի մեջ է արձակուրդների ժամանակահատվածը: Մարդիկ առանձին կամ ընտանիքներով հանգստանալու են մեկնում ծովափ, ամառանոց, ուղեւորության... Սակայն մինչեւ հանգստի կազմակերպումը, հարկ է աշխատանքի վայրից ստանալ համապատասխան թույլտվություն՝ արձակուրդը: Խմբագրության փոստով ստացվող նամակներում շատ են արձակուրդի ձեւակերպման հետ առնչվող հարցերը, ընթերցողներին, մասնավորապես, հետաքրքրում է, թե ինչ ձեւակերպումներ են արված արձակուրդի ստացման կապակցությամբ աշխատանքային նոր օրենսգրքում: Թեմայի լուսաբանման համար մենք դիմեցինք խմբագրության իրավաբանական հարցերով խորհրդատու, իրավաբան Իրինե Ղլոնտուն: Ահա թե ինչ ասաց նա.

- Գործող աշխատանքային օրենսգրքի համաձայն, աշխատողին վճարովի արձակուրդը տարեկան տրվելու է առնվազն 24 աշխատանքային օր ժամկետով, իսկ ոչ վճարովի արձակուրդը տարեկան կազմելու է առնվազն 15 օրացուցային օր: Գործնականում նման ձեւակերպումն էր նաեւ 2013 թվականի հուլիսի 4-ից գործող օրենսգրքում, սակայն արձակուրդից օգտվելուց բաժնում արված է մեկ նշանակալից փոփոխություն: Եթե մինչեւ փոփոխության կատարումը ոչինչ չէր ասված՝ օգտագործած արձակուրդի մասին, ապա նոր օրենսգրքում, երբ աշխատանքային պայմանագիրն ընդհատվում է Վրաստանի աշխատանքային օրենսգրքի 37-րդ հոդվածի «ա», «վ», «ե» եւ «է» ենթակետերով նախատեսված հիմնավորումներով, գործատուն պարտավոր է աշխատողին ապահովել վարձատրությունը չօգտագործված արձակուրդների համար աշխատանքային հարաբերությունների տեւողության համապատասխան: Երկրորդ նորամուծությունը առնչվում է ծանր թունավոր կամ վտանգավոր աշխատանքներին: Նման պայմաններում աշխատողներին տրվում է լրացուցիչ վարձատրվող արձակուրդ, տարեկան օրացուցային 10 օրվա տեւողությամբ:

Ինչ վերաբերում է հղիության, ծննդաբերության եւ երեխային խնամելու համար տրվող արձակուրդին, ինչպես նաեւ նորածնին որդեգրելու, ապա նաեւ նրան խնամելու համար նախատեսված արձակուրդին, ապա 2013 թվականի հուլիսի 4-ից հետո օրենսգրքի այդ հատվածում փոփոխություններ չեն կատարվել: Թեպետ Վրաստանի խորհրդարանն ընդունեց օրենք, որը ուժի մեջ է մտել 2014 թվականի հունվարի 1-ից: Ընդունված օրենքի համաձայն, եթե մինչ այդ աշխատողը սեփական դիմումի համաձայն հղիության, ծննդաբերության եւ երեխային խնամելու համար կարող էր ստանալ 477 օրացուցային օր տեւողության արձակուրդ, որից 126 օրացուցային օրը վարձատրվում էր, իսկ ծննդաբերության բարդացումների կամ երկվորյակների ծնվելու դեպքում վարձատրվող արձակուրդը կազմում էր 140 օրացուցային օր, ապա 2014 թվականի հունվարի 1-ից այդ արձակուրդի տեւողությունը հասցվել է 730 օրացուցային օրվա: Միաժամանակ, հղիության, ծննդաբերության եւ երեխայի խնամքի համար տրված արձակուրդից վարձատրվում է 183 օրացուցային օրը, իսկ ծննդաբերության բարդացումների կամ երկվորյակների ծնվելու դեպքում՝ վարձատրվող արձակուրդային օրերի թիվը հասցված է 200 օրացուցային օրվա:

Փոփոխություններ կատարվեցին նաեւ նորածնին որդեգրելու համար տրվող արձակուրդի բաժնում: Մասնավորապես, եթե մինչ այդ գործող օրենսդրության համաձայն, երբ աշխատողը որդեգրում է մինչեւ մեկ տարեկան երեխայի, եւ դիմումի համաձայն, նորածնին որդեգրելու համար ստանում էր արձակուրդ երեխայի ծննդյան օրվանից հաշված՝ 365 օրացուցային օրվա տեւողությամբ, եւ այդ օրերից 70 օրացուցային օրը վարձատրվում էր, ապա 2014 թվականի հունվարի 1-ից նման աշխատողներին տրվում է երեխայի ծննդյան օրվանից հաշված 550 օրացուցային օրվա տեւողության արձակուրդ, որից 90 օրացուցային օրը վճարովի է:

Անդրադառնալով արձակուրդայինների վճարման կարգին, ապա, հարկ է նշել՝ եթե մինչեւ 2013 թվականի հուլիսի 4-ը գործող աշխատանքային օրենսգրքում նշված էր, որ աշխատավարձը, արձակուրդայինի օրինակով տրվելու է տեղում ամսական մեկ անգամ, ապա կատարած փոփոխություններից հետո ամսական մեկ անգամ տրվող արձակուրդի կարգը պահպանվել է, սակայն վճարման կարգը վերապահվում է գործատուի կամ աշխատողի իրավասությանը: